Հարգելի գործընկերներ. Նախ կցանկանայի շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր այս կամ այն կերպ ներգրավված են եղել ծրագրի առաջին փուլից ի վեր, այդ թվում նաև մեր Ժնևի և Բանգկոկի գործընկերներին, ինչպես նաև բոլոր գործընկերներին, որքեր այսօր մասնակցում են այս կարևոր միջոցառմանը և, հուսով եմ կմասնակցեն ծրագրի հետագա աշխատանքներին:

Հայտնի է, որ սցենարների ճիշտ կառուցման համար առանցքային խնդիր է տվյալների հավաքագրմումը և դրանց հավաստիությունը: Կցանկանայի համառոտ ակնարկ կատարել տվյալների հավաքագրման գործընթացում խնդիրների մասին:

Որոշ տվյալներ հասանելի էին պատրաստի տեսքով, մյուսները պահանջում էին կատարել որոշակի աշխատանք՝ առաջնային աղբյուրների տվյալների մուտքագրման անհրաժեշտ ձևաչափը ստանալու համար, իսկ այլ տվյալներ ամբողջությամբ բացակայում էին:

Օրինակ՝ բնակելի հատվածում էներգիայի սպառման տվյալները ըստ էներգիա սպառող սարքերի տեսակների: Ի դեպ, նմանատիպ ուսումնասիրությունների արդյունքները Ղազախստանի և Վրաստանի գործընկերներին հասանելի էին: ՀՀ-ում նման հետազոտություններ նույնպես կատարվել են առանձին ծրագրերի շրջանակներում: Սակայն վերջին նման ուսումնասիրությունը իրականացվել է մոտ 10 տարի առաջ: Մինչ դեռ անհրաժեշտ է, որ նման ուսումնասիրությունները կատարվեն պարբերաբար, կանոնավոր կերպով: Այս առումով հույս է ներշնչում ՀՀ-ի և ԵՄ-ի միջև կնքված CEPA՝ Համապարփակ և խորացված համագործակցության համաձայնագիրը, որը ի թիվս այլ նորմերի, ենթադրում է Հայաստանում էներգետիկ տվյալների հավաքագրման եվրոպական չափանիշների ներդրում:

Մեկ այլ օրինակ է առևտրային հատվածի, ԲՈՒՀ-երի, առևտրի կենտրոնների, հիվանդանոցների էներգասպառման տվյալները, որոնք ըստ էության բացակայում են: Թեպետ այս տվյալները սկզբունքորեն հասանելի են, սակայն օրենսդրական պահանջների բացակայության պայմաններում դրանց հավաքագրումն շատ աշխատատար խնդիր է: Օրինակ, եթե գազի և էլեկտրաէներգիայի ոլորտների բաժանորդների վերաբերյալ տվյալները կարող են սիրալիր կերպով տրամադրել Գազարդի և ՀԷՑ-ի մեր հարգելի գործընկերները, ապա պետական կադաստրի տվյալների բազայում անշարժ գույքի՝ ըստ նպատակային նշանակության դասակարգումը պարզապես բացակայում է:

Տրանսպորտի ոլորտ: Սեղմված բնական գազով աշխատող տրանսպորտային միջոցների ճշգրիտ տվյալները առկա է լիցենզավորման և հաշվառման օրենսդրական պահանջը ուժի մեջ մտնելուց ի վեր: Սակայն նախկինում ձևափոխված բենզինից սեղմված գազով աշխատելու համար տրանսպորտային միջոցների ճշգրիտ քանակը անորոշ է: ՀՀ ներկրվող տտրանսպորտային միջոցը հաշվառվում է դրա վառելիքի տեսակի նշումով, սակայն հետագա ձևափոխումների մասին հստակ տվյալները խնդրահարույց են:

Փաստացի տվյալների անհասանելիության դեպքերում օգտագործվող հաշվարկային մեթոդները կարող են առաջարկել մոտավոր տվյալներ: Հետևաբար, որոշ տվյալներ կարող են երևալ ոչ ճշգրիտ կամ վիճելի: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ այսօրվա նպատակն է ներկայացնել բուն մոդելը և ձեռք բերված նախնական արդյունքները՝ առկա տվյալների հիման վրա: Դրանք ծրագրի առաջիկա փուլում պետք է հիմնովին ճշտվեն:

Շնորհակալություն ուշադրության համար: